ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Վաղաշեն, (0262)-4-36-42, vaghashen.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12-ը դեկտեմբերի 2019 թվականի N 52-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի ԹԻՎ 13 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի պահանջով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 13 հերթական նիստի օրակարգը՝
   1) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնքում 2020 թվականի համար տեղական տուրքերի, վճարների տեսակները և դրանց դրույքաչափերը սահմանելու մասին.
   2) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնքի ղեկավարի 2020 թվականի վարձատրության չափը սահմանելու մասին.
   3) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշենի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին.
   4) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնքի 2020 թվականի աղբահանության վճարի դրույքաչափերը հաստատելու մասին.
   5) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնքի 2020 թվականի բյուջեի նախագիծը հաստատելու մասին.
   6) Աստղաձոր համայնքի բնակիչ Կարեն Սուրիկի Պետրոսյանի դիմումը քննարկելու մասին.
   7) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնքի 2019 թվականի բյուջեում փոփոխություն կատարելու մասին.
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՖԵՈԴՈՐ

ՀԱԿՈԲՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԻՐՋԱՔԱՆ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ՊԱՐԳԵՎ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԲԱՅԱՆԴՈՒՐ

ՍՈՒՎԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՍՈՒՎԱՐՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՍՈՒՎԱՐՅԱՆ**

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **ԼԱԶՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Վաղաշեն, (0262)-4-36-42, vaghashen.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12-ը դեկտեմբերի 2019 թվականի N 53-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ, ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 8-ից 14-րդ հոդվածների պահանջներով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնքում (այսուհետ՝ համայնք) 2020 թվականի համար սահմանել տեղական տուրքերի հետևյալ տեսակները և դրանց դրույքաչափերը՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայատանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝
մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ,

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեսուն հազար դրամ,
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ,
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ,
- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հարյուր հազար դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեք հազար դրամ,
- 20 և ավելի ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հինգ հազար դրամ.
2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝
ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ երեք հազար դրամ,
բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն որոշման 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով,
գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.
3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար՝ հինգ հազար դրամ.
4) համայնքի վարչական տարածքում, բացառությամբ միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների կողեզրում՝ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ.
5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման կամ նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ քսան հազար դրամ.
6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հիսուն հազար դրամ.
7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝
ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝
-մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հազար դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասը հազար հարյուր դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար հարյուր դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան հազար հարյուր դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանհինգ հազար հարյուր դրամ,
- 500-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քառասունհինգ հազար հարյուր դրամ,
բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝
- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հազար դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասը հազար հարյուր դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար հարյուր դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան հազար հարյուր դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանհինգ հազար հարյուր դրամ,
- 500-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քառասունհինգ հազար հարյուր դրամ.
8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ երեք հարյուր հիսուն դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.
9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝
ա. առևտրի օբյեկտների համար՝ հինգ հազար դրամ,
բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ քսանհինգ հազար դրամ,
գ. բաղնիքների (սաունաների) համար՝ երկու հարյուր հազար դրամ,
դ. խաղատների համար՝ հինգ հարուր հազար դրամ,
ե.շահումով խաղերի համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ,
զ. վիճակախաղերի համար՝ հարյուր հազար դրամ.
10) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝
ա. հիմնական շինությունների ներսում՝
- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հազար դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հազար հարյուր դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասը հազար հարյուր դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնհինգ հազար հարյուր դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսան հազար հարյուր դրամ,
- 500-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեսուն հազար հարյուր դրամ.
բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝
- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հազար դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հազար հարյուր դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար հարյուր դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ չորս հազար հարյուր դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ութ հազար հարյուր դրամ,
- 500-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնհինգ հազար հարյուր դրամ.
11) համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլայի ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝
ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար դրամ,
բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երեք հազար հինգ հարյուր դրամ,
գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,
դ. այլ արտաքին գովազդի համար՝ հազար հինգ հարյուր դրամ,
ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով,
զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.
12) համայնքի խորհրդանիշները (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ.
13) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում մեկ մեքենայի համար՝ տասը հազար դրամ.
14) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հինգ հարյուր հազար դրամ.
15) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝
ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ,
բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ հինգ միլիոն դրամ,
գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ յոթ միլիոն դրամ,
դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ տասը միլիոն դրամ.

16) համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հիսուն հազար դրամ:

2. Սույն որոշման 1-ին մասով սահմանված դրույքաչափերը հաշվարկել 0.3 գործակցի կիրառմամբ:
3. Համայնքում 2020 թվականի համար սահմանել տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը՝
   1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հազար դրամ.
   2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպան համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հազար դրամ.
   3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայության դիմաց փոխհատուցման վճար՝ հազար դրամ.
   4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների փոխհատուցման վճար՝ հինգ հազար դրամ.
   5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հինգ հազար դրամ.
   6) համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճարը սահմանել «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և դրույքաչափերի սահմաններում.
   7) համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար աղբահանության վճարը սահմանել «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և դրույքաչափերի սահմաններում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՖԵՈԴՈՐ

ՀԱԿՈԲՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԻՐՋԱՋԱՆ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ՊԱՐԳԵՎ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԲԱՅԱՆԴՈՒՐ

ՍՈՒՎԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՍՈՒՎԱՐՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՍՈՒՎԱՐՅԱՆ**

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **ԼԱՋՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Վաղաշեն, (0262)-4-36-42, vaghashen.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12-ը դեկտեմբերի 2019 թվականի N 54-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի և 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնքի ղեկավարի 2020 թվականի վարձատրության չափը սահմանել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ 52.01 տոկոսի չափով՝ 344000 (երեք հարյուր քառասունչորս հազար) դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 1-ից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՖԵՈԴՈՐ

ՀԱԿՈԲՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԻՐԶԱՋԱՆ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ՊԱՐԳԵՎ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԲԱՅԱՆԴՈՒՐ

ՍՈՒՎԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՍՈՒՎԱՐՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՈՒՎԱՐՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԼԱԶՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Վաղաշեն, (0262)-4-36-42, vaghashen.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12-ը դեկտեմբերի 2019 թվականի N 55-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի պահանջով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշենի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Վաղաշեն համայնքի ավագանու 2019 թվականի հոկտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշենի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N48-Ա որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 1-ից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՖԵՈԴՈՐ

ՀԱԿՈԲՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԻՐԶԱՋԱՆ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ՊԱՐԳԵՎ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԲԱՅԱՆԴՈՒՐ

ՍՈՒՎԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՍՈՒՎԱՐՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՍՈՒՎԱՐՅԱՆ**

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **ԼԱՋՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Հավելված
ՀՀ Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնքի
ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 55-Ա որոշման

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 16
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԾԱԾԿԱԳԻՐԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՄԵԿ ՄԻԱՎՈՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ / ՀՀ դրամ /	ԱՄՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ (ՀՀ դրամ)
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ		1	344000 (ԱԺ պատգամավորի պաշտոնային դրույքաչափի 52.01 %)	344000.0
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ		1	235000 (համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափի 68.31 %)	235000.0
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ	1.2-1	1	240000 (համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափի 69.77 %)	240000.0
ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ	2.3-1	1	125000 (համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափի 36.34 %)	125000.0
ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ	2.3-2	1	125000 (համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափի 36.34 %)	125000.0
ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ	2.3-4	1	125000 (համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափի 36.34 %)	125000.0
ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ	3.1-1	1	124000 (համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափի 36.05 %)	124000.0
ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ	3.1-2	1	124000 (համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափի 36.05 %)	124000.0
ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ	3.1-3	1	124000 (համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափի 36.05 %)	124000.0

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐ-ԳՈՐԾԱՎԱՐ		1	165000 (համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափի 47.96 %)	165000.0
ԳՐԱԴԱՐԱՆԱՎԱՐ		1	90000 (համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափի 26.16 %)	90000.0
ԱՆԱՍՆԱԲՈՒՅԺ		1	125000 (համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափի 36.34 %)	125000.0
ՀԱՎԱՔԱՐԱՐ		1	90000 (համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափի 26.16 %)	90000.0
ՀԱՎԱՔԱՐԱՐ		1	90000 (համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափի 26.16 %)	90000.0
ՊԱՀԱԿ		1	90000 (համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափի 26.16 %)	90000.0
ՊԱՀԱԿ		1	90000 (համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափի 26.16 %)	90000.0
Ընդամենը՝		**16**		2306000.0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՈՒՎԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Վաղաշեն, (0262)-4-36-42, vaghashen.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12-ը դեկտեմբերի 2019 թվականի N 56-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ և 8-րդ կետերի, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի պահանջներով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնքում 2020 թվականին աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար սահմանել աղբահանության վճարներ հետևյալ դրույքաչափերով՝
   1) Բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում կոշտ կենցաղային թափոնների համար՝
   ա) ըստ հաշվառված անձանց քանակի ՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ամսական 100 (հարյուր) դրամ.
   բ) ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդանուր մակերեսի՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ ամսական 7(յոթ) դրամ:
   2) Համայնքում առկա ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում, այդ թվում՝ հասարակական, հանրային, ծառայությունների մատուցման, արտադրական, արդյունաբերական շենքերում և (կամ) շինություններում ըստ շինության ընդհանուր մակերեսի կոշտ կենցաղային թափոնների համար՝
   ա) առևտրի (այդ թվում՝ շուկաների), հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացնող շինությունների մասով մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ ամսական 50 (հիսուն) դրամ.
   բ) հյուրանոցների և հյուրանոցային տնտեսության ծառայություններ, ինչպես նաև այլ գործունեություն իրականացնող հասարակական շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ ամսական 25 (քսանհինգ) դրամ.
   գ) արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ ամսական 5 (հինգ) դրամ.

դ) կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ ամսական 5 (հինգ) դրամ.

ե) շինություններում, որտեղ իրականացվում է մեկից ավելի առանձնացված տնտեսական գործունեություն, աղբահանության վճարն ամբողջությամբ հաշվարկել առավել բարձր դրույքաչափով:

3) ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝

ա) ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 1000 (հազար) դրամ.

բ) ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ 1000 (հազար) դրամ:

2. Սույն որոշման 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված աղբի ծավալը կամ զանգվածը որոշելու (պարզելու) անհնարինության դեպքում, այդ թվում՝ տեխնիկական, աղբահանության վճարը սահմանվում է հետևյալ ամսական դրույքաչափով՝

1) առևտրի և բնակչության կենցաղային սպասարկման ծառայություններ իրականացնող շինությունների մասով՝

ա) մինչև հիսուն քառակուսի մետր մակերես ունեցող շինությունների համար՝ 500 (հինգ հարյուր) դրամ.

բ) հիսուն քառակուսի մետրից ավել մակերես ունեցող շինությունների համար՝ 500 (հինգ հարյուր) դրամ գումարած հիսուն քառակուսի մետրը գերազանցող յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի համար ևս 30 (երեսուն) դրամ.

2) հանրային սննդի ծառայություններ իրականացնող շինությունների մասով մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 50 (հիսուն) դրամ.

3) հյուրանոցների և հյուրանոցային ծառայություններ իրականացնող այլ հասարակական շինությունների մասով մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 30 (երեսուն) դրամ.

4) արտադրական, արդյունաբերական և գրասենյակային շինությունների մասով մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 8 (ութ) դրամ.

5) կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 4 (չորս) դրամ:

3. Համայնքի վարչական տարածքում իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար համայնքի ղեկավարի կողմից տրամադրվող թույտվության համար գանձվող տեղական վճարը սահմանել՝

1) ըստ ծավալի մեկ խորանարդ մետր աղբի հավաքման և տեղափոխման թույտվության համար՝ 600 (վեց հարյուր) դրամ.

2) ըստ զանգվածի մեկ տոննա աղբի հավաքման և տեղափոխման թույլտվության համար՝ 2000 (երկու հազար) դրամ:

4. Աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար աղբահանության վճարը սահմանել 0 (զրո դրամ):

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՖԵՈԴՈՐ

ՀԱԿՈԲՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԻՐՋԱՋԱՆ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ՊԱՐԳԵՎ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԲԱՅԱՆԴՈՒՐ

ՍՈՒՎԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՍՈՒՎԱՐՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՍՈՒՎԱՐՅԱՆ**

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **ԼԱՋՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Վաղաշեն, (0262)-4-36-42, vaghashen.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12-ը դեկտեմբերի 2019 թվականի N 57-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի պահանջներով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնքի 2020 թվականի բյուջեի նախագիծը՝ համաձայն 1, 2, 3, 4, 6 հատվածների.
   1) վարչական բյուջեի եկամուտներ՝ 122978.0 հազար դրամ,
   2) վարչական բյուջեի ծախսեր՝ 122978.0 հազար դրամ,
   3) բյուջեի միջոցների վարչական մասի հավելուրդը կամ դեֆիցիտը (պակասուրդը)՝ 0 դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՖԵՈԴՈՐ

ՀԱԿՈԲՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԻՐԶԱՋԱՆ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ՊԱՐԳԵՎ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԲԱՅԱՆԴՈՒՐ

ՍՈՒՎԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՍՈՒՎԱՐՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՐԹՈՒՐ ՍՈՒՎԱՐՅԱՆ**

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **ԼԱՋՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ

ՎԱՂԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

2020 ԹՎԱԿԱՆԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ

Հաստատված է

Վաղաշեն համայնքի ավագանու

2019 թվականի դեկտեմբերի 12-ի N 57-Ն որոշմամբ

ՀՀ ՖՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

(համայնքի բյուջեն սպասարկող տեղական գանձապետական բաժանմունքի անվանումը)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՎԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ ԳՐԻՇԱՅԻ

(անունը, ազգանունը, հայրանունը)

Կ. Տ.

ՀԱՏՎԱԾ 1
ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

(հազար դրամով)

Տողի N	Եկամտատեսակները	Հոդվածի NN	Ընդամենը (ս.5+ս.6)	այդ թվում	
				վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6
1000	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող 1100 + տող 1200 + տող 1300) այդ թվում՝		122978.0	122978.0	0.0
1100	1. ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ (տող 1110 + տող 1120 + տող 1130), այդ թվում՝	7100	14230.0	14230.0	x
1110	1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից (տող 1112), այդ թվում՝	7131	5280.0	5280.0	x
1112	Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար		5280.0	5280.0	x
1120	1.2 Գույքային հարկեր այլ գույքից, այդ թվում՝	7136	8800.0	8800.0	x
1121 Բ	Գույքահարկ փոխադրամիջոցների համար (ֆիզիկական անձանցից)		8800.0	8800.0	x
1130	1.3 Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ, այդ թվում՝	7145	150.0	150.0	x
1131	Տեղական տուրքեր, (տող 1132 + տող 1137), այդ թվում՝	71452	150.0	150.0	x
1132	ա) Համայնքի տարածքում նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարություն (տեղադրման) թույլտվության համար (տող 1133), որից՝		32.0	32.0	x
1133	աա) Հիմնական շինությունների համար		32.0	32.0	x
1137	դ) Համայնքի տարածքում ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում՝ ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության համար		118.0	118.0	x
1200	2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ (տող 1250), այդ թվում՝	7300	104967.5	104967.5	0.0
1250	2.5 Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից, (տող 1251), որից՝	7331	104967.5	104967.5	x
1251	ա) Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ		104967.5	104967.5	x
1300	3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ, (տող 1330 + տող 1350), այդ թվում՝	7400	3780.5	3780.5	0.0
1330	3.3 Գույքի վարձակալությունից եկամուտներ (տող 1331 + տող 1332 + տող 1334), այդ թվում՝	7415	1280.5	1280.5	x
1331	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարներ		500.0	500.0	x
1332	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձավճարներ		180.5	180.5	x
1334	Այլ գույքի վարձակալությունից մուտքեր		600.0	600.0	x
1350	3.5 Վարչական գանձումներ, (տող 1351), այդ թվում՝	7422	2500.0	2500.0	x
1351	Տեղական վճարներ		2500.0	2500.0	x

ՀԱՏՎԱԾ 2
ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

(հազար դրամով)

Տողի NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները	Ընդամենը (u.7+u.8)	այդ թվում՝	
						վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8
2000	X	X	X	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող 2100 + տող 2400 + տող 2500 + տող 2600 + տող 2800 + տող 3000 + տող 3100)	122978.0	122978.0	0.0
2100	1	0	0	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ (այլ դասերին չպատկանող) (տող 2110 + տող 2130 + տող 2160) այդ թվում՝	54583.0	54583.0	0.0
2110	1	1	0	Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ որից՝	47733.0	47733.0	0.0
2111	1	1	1	Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում	47733.0	47733.0	0.0
2130	1	3	0	Ընդհանուր բնույթի ծառայություններ, որից՝	250.0	250.0	0.0
2133	1	3	3	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	250.0	250.0	0.0
2160	1	6	0	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող), որից՝	6600.0	6600.0	0.0
2161	1	6	1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	6600.0	6600.0	0.0
2400	4	0	0	ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (տող 2420 + տող 2450), այդ թվում՝	34000.0	34000.0	0.0
2420	4	2	0	Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն և որսորդություն, որից՝	23800.0	23800.0	0.0
2421	4	2	1	Գյուղատնտեսություն	19600.0	19600.0	0.0
2424	4	2	4	Ոռոգում	4200.0	4200.0	0.0
2450	4	5	0	Տրանսպորտ, որից՝	10200.0	10200.0	0.0
2451	4	5	1	Ճանապարհային տրանսպորտ	10200.0	10200.0	0.0
2500	5	0	0	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ (տող 2510), այդ թվում՝	2500.0	2500.0	0.0
2510	5	1	0	Աղբահանում, որից՝	2500.0	2500.0	0.0
2511	5	1	1	Աղբահանում	2500.0	2500.0	0.0
2600	6	0	0	ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ (տող 2630), այդ թվում՝	3100.0	3100.0	0.0
2630	6	3	0	Ջրամատակարարում, որից՝	3100.0	3100.0	0.0
2631	6	3	1	Ջրամատակարարում	3100.0	3100.0	0.0
2800	8	0	0	ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ (տող 2820), այդ թվում՝	1700.0	1700.0	0.0
2820	8	2	0	Մշակութային ծառայություններ, որից՝	1700.0	1700.0	0.0
2823	8	2	3	Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ	1100.0	1100.0	0.0
2824	8	2	4	Այլ մշակութային կազմակերպություններ	600.0	600.0	0.0
3000	10	0	0	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ (տող 3070), այդ թվում՝	1350.0	1350.0	0.0

3070	10	7	0	Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) , որից՝	1350.0	1350.0	0.0
3071	10	7	1	Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)	1350.0	1350.0	0.0
3100	11	0	0	ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ (տող 3110), այդ թվում՝	25745.0	25745.0	0.0
3110	11	1	0	ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ , որից՝	25745.0	25745.0	0.0
3112	11	1	2	ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ	25745.0	25745.0	0.0

ՀԱՏՎԱԾ 3

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ՝ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

(հազար դրամով)

Տողի NN	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	NN	Ընդամենը (ս.5+ս.6)	այդ թվում	
				վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6
4000	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող 4050) այդ թվում՝	x	122978.0	122978.0	0.0
4050	Ա. ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ՝ (տող 4100 + տող 4200 + տող 4500 + տող 4600 + տող 4700) այդ թվում՝	x	122978.0	122978.0	x
4100	1.1 ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ (տող 4110) այդ թվում՝	x	34033.0	34033.0	x
4110	ԴՐԱՄՈՎ ՎՃԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԵՐ ԵՎ ՀԱՎԵԼԱՎՃԱՐՆԵՐ (տող 4111 + տող 4112) որից՝	x	34033.0	34033.0	x
4111	- Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	4111	32033.0	32033.0	x
4112	- Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	4112	2000.0	2000.0	x
4200	1.2 ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ (տող 4210 + տող 4220 + տող 4230 + տող 4240 + տող 4250 + տող 4260), այդ թվում՝	x	40450.0	40450.0	x
4210	ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ (տող 4212 + տող 4213 + տող 4214 + տող 4215), որից՝	x	9000.0	9000.0	x
4212	- Էներգետիկ ծառայություններ	4212	2400.0	2400.0	x
4213	- Կոմունալ ծառայություններ	4213	6000.0	6000.0	x
4214	- Կապի ծառայություններ	4214	500.0	500.0	x
4215	- Ապահովագրական ծախսեր	4215	100.0	100.0	x
4220	ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱԽՍԵՐ (տող 4221), որից՝	x	600.0	600.0	x
4221	- Ներքին գործուղումներ	4221	600.0	600.0	x
4230	ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ (տող 4232 + տող 4234 + տող 4235 + տող 4238), որից՝	x	7350.0	7350.0	x
4232	- Համակարգչային ծառայություններ	4232	450.0	450.0	x
4234	- Տեղակատվական ծառայություններ	4234	800.0	800.0	x
4235	- Կառավարչական ծառայություններ	4235	500.0	500.0	x
4238	- Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	5600.0	5600.0	x
4240	ԱՅԼ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ (տող 4241), որից՝	x	3200.0	3200.0	x
4241	- Մասնագիտական ծառայություններ	4241	3200.0	3200.0	x
4250	ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄ (ծառայություններ և նյութեր) (տող 4251 + տող 4252), որից՝	x	13500.0	13500.0	x
4251	- Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	4251	12000.0	12000.0	x
4252	- Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	4252	1500.0	1500.0	x
4260	ՆՅՈՒԹԵՐ (տող 4261 + տող 4264 + տող 4267 + տող 4268), որից՝	x	6800.0	6800.0	x
4261	- Գրասենյակային նյութեր և հագուստ	4261	1000.0	1000.0	x
4264	- Տրանսպորտային նյութեր	4264	3000.0	3000.0	x
4267	- Կենցաղային և հանրային սննդի նյութեր	4267	1000.0	1000.0	x

4268	- Հատուկ նպատակային այլ նյութեր	4269	1800.0	1800.0	x
4500	1.5 ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ (տող 4540), այդ թվում՝	x	19600.0	19600.0	x
4540	ԿԱՊԻՏԱԼ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԱՅԼ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻՆ (տող 4543), որից՝	x	19600.0	19600.0	x
4543	- Այլ կապիտալ դրամաշնորհներ, այդ թվում՝	4657	19600.0	19600.0	x
4600	1.6 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ ԵՎ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ (տող 4630), այդ թվում՝	x	2500.0	2500.0	x
4630	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՄԲ ՆՊԱՍՏՆԵՐ (ԲՅՈՒՋԵԻՑ) (տող 4634), որից՝	x	2500.0	2500.0	x
4634	- Այլ նպաստներ բյուջեից	4729	2500.0	2500.0	x
4700	1.7 ԱՅԼ ԾԱԽՍԵՐ (տող 4710 + տող 4720 + տող 4770), այդ թվում՝	x	26395.0	26395.0	x
4710	ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՉ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ (ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ) ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ (տող 4712), որից՝	x	1000.0	1000.0	0.0
4712	- Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին	4819	1000.0	1000.0	x
4720	ՀԱՐԿԵՐ, ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ ԵՎ ՏՈՒՅԺԵՐ, ՈՐՈՆՔ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԲԵՐ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԻՐԱՌՎՈՒՄ ԵՆ ՄԻՍՅԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ (տող 4722 + տող 4723), որից՝	x	800.0	800.0	x
4722	- Այլ հարկեր	4822	400.0	400.0	x
4723	- Պարտադիր վճարներ	4823	400.0	400.0	x
4770	ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ (տող 4771), որից՝	x	24595.0	24595.0	0.0
4771	- Պահուստային միջոցներ (վարչական բյ.)	4891	24595.0	24595.0	x

ՀԱՏՎԱԾ 4
ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԱՐԵՎԵՐՋԻ ՀԱՎԵԼՈՒՐԴԸ ԿԱՄ ԴԵՖԻՑԻՏԸ (ՊԱԿԱՍՈՒՐԴԸ)

(հազար դրամով)

Տողի N	Եկամուտների անվանումը	Ընդամենը (ս.4+ս.5)	այդ թվում	
			վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5
8000	ԸՆԴԱՄԵՆԸ ՀԱՎԵԼՈՒՐԴԸ (դրական նշանով) ԿԱՄ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ (բացասական նշանով)*	0.0	0.0	0.0

ՀԱՏՎԱԾ 6

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

(հազար դրամով)

Տողի NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի, դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Տնտեսագիտական դասակարգման հոդված	Ընդամենը (ս.8+ս.9)	այդ թվում՝	
							վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8	9
2000	X	X	X	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ՝ (տող 2100 + տող 2400 + տող 2500 + տող 2600 + տող 2800)		122978.0	122978.0	0.0
2100	1	0	0	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ (այլ դասերին չպատկանող) (տող 2110 + տող 2130 + տող 2160) այդ թվում՝		54583.0	54583.0	0.0
2110	1	1	0	Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ որից՝		47733.0	47733.0	0.0
2111	1	1	1	Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում		47733.0	47733.0	0.0
				- Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	4111	32033.0	32033.0	0.0
				- Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	4112	2000.0	2000.0	0.0
				- Էներգետիկ ծառայություններ	4212	2000.0	2000.0	0.0
				- Կապի ծառայություններ	4214	500.0	500.0	0.0
				- Ապահովագրական ծախսեր	4215	100.0	100.0	0.0
				- Ներքին գործուղումներ	4221	600.0	600.0	0.0
				- Համակարգչային ծառայություններ	4232	200.0	200.0	0.0
				- Տեղակատվական ծառայություններ	4234	300.0	300.0	0.0
				- Կառավարչական ծառայություններ	4235	500.0	500.0	0.0
				- Մասնագիտական ծառայություններ	4241	2000.0	2000.0	0.0
				- Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	4252	1500.0	1500.0	0.0
				- Գրասենյակային նյութեր և հագուստ	4261	1000.0	1000.0	0.0
				- Տրանսպորտային նյութեր	4264	3000.0	3000.0	0.0
				- Կենցաղային և հանրային սննդի նյութեր	4267	1000.0	1000.0	0.0
				- Հատուկ նպատակային այլ նյութեր	4269	600.0	600.0	0.0
				- Այլ հարկեր	4822	200.0	200.0	0.0
				- Պարտադիր վճարներ	4823	200.0	200.0	0.0
2130	1	3	0	Ընդհանուր բնույթի ծառայություններ, որից՝		250.0	250.0	0.0
2133	1	3	3	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ		250.0	250.0	0.0
				- Համակարգչային ծառայություններ	4232	250.0	250.0	0.0
2160	1	6	0	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող), որից՝		6600.0	6600.0	0.0
2161	1	6	1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)		6600.0	6600.0	0.0

				- Էներգետիկ ծառայություններ	4212	400.0	400.0	0.0
				- Կոմունալ ծառայություններ	4213	1500.0	1500.0	0.0
				- Տեղակատվական ծառայություններ	4234	500.0	500.0	0.0
				- Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	600.0	600.0	0.0
				- Մասնագիտական ծառայություններ	4241	600.0	600.0	0.0
				- Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	4251	1000.0	1000.0	0.0
				- Հատուկ նպատակային այլ նյութեր	4269	600.0	600.0	0.0
				- Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին	4819	1000.0	1000.0	0.0
				- Այլ հարկեր	4822	200.0	200.0	0.0
				- Պարտադիր վճարներ	4823	200.0	200.0	0.0
2400	4	0	0	ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (տող 2420 + տող 2450), այդ թվում՝		34000.0	34000.0	0.0
2420	4	2	0	Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն և որսորդություն, որից՝		23800.0	23800.0	0.0
2421	4	2	1	Գյուղատնտեսություն		19600.0	19600.0	0.0
				- Այլ կապիտալ դրամաշնորհներ	4657	19600.0	19600.0	0.0
2424	4	2	4	Որոգում		4200.0	4200.0	0.0
				- Կոմունալ ծառայություններ	4213	2000.0	2000.0	0.0
				- Մասնագիտական ծառայություններ	4241	200.0	200.0	0.0
				- Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	4251	2000.0	2000.0	0.0
2450	4	5	0	Տրանսպորտ, որից՝		10200.0	10200.0	0.0
2451	4	5	1	Ճանապարհային տրանսպորտ		10200.0	10200.0	0.0
				- Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	5000.0	5000.0	0.0
				- Մասնագիտական ծառայություններ	4241	200.0	200.0	0.0
				- Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	4251	5000.0	5000.0	0.0
2500	5	0	0	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ (տող 2510 + տող 2520 + տող 2530 + տող 2540 + տող 2550 + տող 2560), այդ թվում՝		2500.0	2500.0	0.0
2510	5	1	0	Աղբահանում, որից՝		2500.0	2500.0	0.0
2511	5	1	1	Աղբահանում		2500.0	2500.0	0.0
				- Կոմունալ ծառայություններ	4213	2500.0	2500.0	0.0
2600	6	0	0	ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ (տող 2630), այդ թվում՝		3100.0	3100.0	0.0
2630	6	3	0	Ջրամատակարարում, որից՝		3100.0	3100.0	0.0
2631	6	3	1	Ջրամատակարարում		3100.0	3100.0	0.0
				- Մասնագիտական ծառայություններ	4241	100.0	100.0	0.0
				- Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	4251	3000.0	3000.0	0.0
2800	8	0	0	ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ (տող 2820), այդ թվում՝		1700.0	1700.0	0.0
2820	8	2	0	Մշակութային ծառայություններ, որից՝		1700.0	1700.0	0.0
2823	8	2	3	Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ		1100.0	1100.0	0.0
				- Մասնագիտական ծառայություններ	4241	100.0	100.0	0.0

				- Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	4251	1000.0	1000.0	0.0
2824	8	2	4	Այլ մշակութային կազմակերպություններ		600.0	600.0	0.0
				- Հատուկ նպատակային այլ նյութեր	4269	600.0	600.0	0.0
3000	10	0	0	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ (տող 3070), այդ թվում՝		1350.0	1350.0	0.0
3070	10	7	0	Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) , որից՝		1350.0	1350.0	0.0
3071	10	7	1	Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)		1350.0	1350.0	0.0
				- Այլ նպաստներ բյուջեից	4729	1350.0	1350.0	0.0
3100	11	0	0	ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ (տող 3110), այդ թվում՝		25745.0	25745.0	0.0
3110	11	1	0	ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ , որից՝		25745.0	25745.0	0.0
3112	11	1	2	ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ		25745.0	25745.0	0.0
				- Այլ նպաստներ բյուջեից	4729	1150.0	1150.0	0.0
				- Պահուստային միջոցներ (վարչական բյ.)	4891	24595.0	24595.0	0.0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Վաղաշեն, (0262)-4-36-42, vaghashen.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12-ը դեկտեմբերի 2019 թվականի N 58-Ա

ԱՍՏՂԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԿԱՐԵՆ ՍՈՒՐԻԿԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշումը, ՀՀ Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնքի գլխավոր հատակագիծը և քննարկելով ՀՀ Գեղարքունիքի մարզի Աստղաձոր համայնքի բնակիչ Կարեն Սուրիկի Պետրոսյանի դիմումը՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Մերժել ՀՀ Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնքի վարչական սահմաններում գտնվող ՀՀ Գեղարքունիքի մարզի Աստղաձոր համայնքի բնակիչ Կարեն Սուրիկի Պետրոսյանին սեփականություն իրավունքով պատկանող 1 միավոր (կադաստրային ծածկագիր 05-082-0420-0005) 0.062 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողի նպատակային նշանակությունը փոխելու վերաբերյալ դիմումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՖԵՈԴՈՐ

ՀԱԿՈԲՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԻՐԶԱՋԱՆ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ՊԱՐԳԵՎ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԲԱՅՍԼԱՆ

ՍՈՒՎԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՍՈՒՎԱՐՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՍՈՒՎԱՐՅԱՆ**

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **ԼԱՋՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Վաղաշեն, (0262)-4-36-42, vaghashen.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12-ը դեկտեմբերի 2019 թվականի N 59-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնքի 2019 թվականի վարչական բյուջեի 1.1.1.51 գործառնական դասակարգման (օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում) 4221 տնտեսագիտական դասակարգման ծախսային հոդվածից (ներքին գործուղումներ) պակասեցնել (կրճատել) 300.0 հազար դրամ, այն ավելացնել համայնքի վարչական բյուջեի 1.1.1.51 գործառնական դասակարգման (օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում) 4241 տնտեսագիտական դասակարգման ծախսային հոդվածին (մասնագիտական ծառայություններ):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՖԵՈԴՈՐ

ՀԱԿՈԲՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԻՐԶԱՋԱՆ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ՊԱՐԳԵՎ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԲԱՅԱՆԴՈՒՐ

ՍՈՒՎԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՍՈՒՎԱՐՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՍՈՒՎԱՐՅԱՆ**

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **ԼԱԶՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**